






ՀԱՅԴԵՏՀՐԱՏ  
ՀԼԿԵՄ  
ԿԵՆՏՐԱԼՈՒՆ ԿԻՑ  
ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱԺԻՆ

---


Երևան  
1982



ՀՈԿԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ԱՆՈՒՇ

ՆԿԱՐԻՉ Գ. ԽԱՆՁՅԱՆ





Ն. Ս. Խ. Բ. Գ. Ս. Ն. Փ.

(Համարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,  
Հովի թեին՝ թըռչելով՝  
Փերինները սարի գլխին  
Հավաքվեցին գիշերով:

— Եկեք, քույրեր, սեզ սարերի  
Զբոսադադեղ ոգիներ,  
Եկեք, ջանել սիրահարի  
Սերը ողբանք վաղամեռ:

Օխան աղբյուրից ջուր է առել  
Կույս սափորով, լուռ ու մունջ,  
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,  
Կապել սիրո ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղանք գրքել,  
Խընդիրք արել աստղերին,  
Փափազ սրբաով խընդիրք արել՝  
Բարի ժըպտան իր սերին...

Ափսոս, Անճուշ, սարի ծաղիկ,  
Ափսոս իզիթ քու յարին.  
Ափսոս բոյիդ թեղիկ-մեղիկ,  
Ափսոս էդ ծով աչքերին...»:

Ու նրբանց հետ՝ ցող-արցունքով  
Լըցված սրբաբերն ու աչքեր՝  
Սարի ծաղկունք արխուր սյուքով  
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վճուշ, Անճուշ, վուշ-վճուշ, քուրիկ,  
Վճուշ քու սերին, քու յարին...  
Վուշ-վճուշ, Սարժ, վուշ-վճուշ, իզիթ,  
Վճուշ քու սիրած սարերին...»:

— «Եկեք, քույրեր, սեզ սարերի  
Զըքնաղաղեղ ոգիներ...»:  
Ու փերիններն էսպես տըխուր  
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հրրաշալի  
Հրնչյուններով դյուխական,  
Ու հենց շողաց ցոլքն արևի՝  
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուգվեցին ակն աղբյուրի,  
Մըտան կաղնին հաստաբուն,  
Ու լեռնային վըտակների  
Ալիքները պաղպաղում:





## II

Է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր,  
 Ահա ձեզ տեսա ու միտքս ընկան,  
 Առաջին եկան երջանիկ օրեր,  
 Սիրելի գեմքեր, որ հիմի չըկան:  
 Անցել են, սնց որ ծաղկունքը պես-պես,  
 Որ անցած գարնան կային ձեր լանջում:  
 Անցել՝ ձեր գլխի հերվան ձյունի պես,  
 Բայց եկել եմ ես՝ նրբանց եմ կանչում:  
 Ողջո՛ւյն ձեզ, կյանքիս անգրանիկ հուշեր,  
 Որբացած հոգիս ողջունում է ձեզ,  
 Թրջուն կարոտով փրնարում ձոր ու լեռ,  
 Դյուխական ձայնով կանչում է հանդես:  
 Դուրս եկեք կրքիկին շիրմից, խավարից,  
 Դուրս եկեք տեսնեմ, շոշափեմ, լրեսեմ:  
 Կյանքով շրնչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,  
 Լրցրե՛ք պոետի հաճույքը վրեսեմ...

## III

Եվ մութ ալերից մամոռա ժայռերի,  
 Թափուա ծրմակի լրսին խորքերից,  
 Մանուկ հասակիս հրնչուն ծիծաղի  
 Արձագանքն ահա լրսում եմ նորից:  
 Թրնդում է գրվարթ աղմուկը բինի,  
 Բարձրանում է ծուխն իմ ծանոթ ուրթից,  
 Ու բոլորն, ահա, նորից կենդանի,  
 Ելնում են աշխարհ վաղորդյան մութից,  
 Ու թա՛րմ, ցողապատ լեռների լանջում...  
 Սուս... տկանջ արա,— հովիտն է կանչում...



— Աղջիկ, անտատիած, նըստիր վըրանում,  
Ի՞նչ ես դուրս գալիս, խեղճամաղ անում,  
Աշուղ ես շինել, չեմ հանդըստանում,

Խաղեր կապելով,  
Ձուլեր չափելով,  
Ոչխարըս անտեր,  
Ընկել եմ հանդերս

Աման, էրեցիր սիրտըս քու սիրով,  
Ոտըս կապեցիր թեկ-թեկ մաղերով,  
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ գոռով,

Ա՛յ սարի աղջիկ,  
Ա՛յ սիրուն աղջիկ,  
Ա՛յ դու կարմրաթուշ,  
Թուխամաղ Անուշ:

Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,  
Արին կըթափեմ ես գետի նըման.  
Սարերը կընկնեմ—կորչեմ անդյուման,

Ա՛յ սե աչքերով,  
Ա՛յ ծով աչքերով,  
Ունքերըդ կամար  
Աղջիկ, քեզ համար:



Երգում է Սարոն, ու չի կարենում  
 Ազնիկը հանգիստ նըստի վրանում:  
 — Էն սվ էր, հանի, որ կանչում էր մեզ,  
 Դու չեա իմանում... ականջ արա, ահա...  
 — Հերիք է, Անուշ, ներս արի դագեն,  
 Քանի դուրս թըռչես, նայես դեսուդեն,  
 Տեսնողն էլ կասի—ինչ ազնիկ է սա...  
 Հազար մարդի հետ կերթա-կըխտա:  
 — Մըաիկ տուր, հանի, էն սարի լանջին  
 Ինչքան ավուկ է տալիս կանաչին...  
 Նանի, թող գընամ քաղեմ ու հյուսեմ,  
 Էն սարի լանջին «ջան գյուլում» ասեմ:  
 — Հանգիստ կաց, Անուշ, դու հասած ազնիկ,  
 Ի՞նչ ունես ջաշել չորանների մոտ,  
 Նրստիք վրանում, քու գործին մըաիկ,  
 Պարկեշտ կաց, ազնի, ամոթ է, ամոթ:  
 — Ախ, սիրաբա, հանի, չըգիտեմ ընչի,  
 Մին բաց է լինում սեակնամ, արխուր,  
 Մին թե է առնում—ուզում է թըռչի,  
 Զըգիտեմ թե ուր, չըգիտեմ թե ուր...  
 Նանի ջան, հանի, ես ի՞նչպես անեմ,  
 Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ...  
 Նանի ջան, հանի, կուժը թող տունեմ,  
 Ազըյուրը գընամ ազնիկների հետ...





## VI

Կրժեքն ուսած՝ թրուլրուլով  
Ջուրն էն իջնում աղջիկներ,  
Ուրդում իրար ուսի տալով,  
Երգը զընգում սարն ի վեր:

— Ամալի տակից ջուր է դալի,  
Դոշ է տալի, փրփրվելում:  
Էն մում յարն է նրստած լալի  
Հոնգուր-հոնգուր էն սարում:

Այ պաղ ջրեր, զուլալ ջրեր,  
Որ դալիս էք սարերից,  
Գալիս՝ անցնում հանգ ու շողեր,  
Յարս էլ խրմեց էդ ջրերից:

Յարար խրմեց, յարար հովցանվ  
Վառված սիրտը էն յարի,  
Յարար հովցանվ, յարար անցանվ  
Անքուն ցավը ջիգյարի...

— Աղջի, քո յարն եկավ, անցավ,  
Վառված, տաքված քու սիրտով,  
Էրված ջիգյարն՝ եկավ, անցավ,  
Զըհովացավ պաղ ջրերով...

Ամպի տակից ջուր է գալի,  
Դու է տալի, փրկի՞րբում.  
Ախ, իմ աղիկ յարն է լալի  
Հոնգուր-հոնգուր էն սարում:

## VII

Ու պառավ հանի սրբաի մեջ հանկարծ  
Ձեն տրվավ թաքուն մի խափար կասկած.  
— Էն երբ էր՝ Անուշն իր կուժը առավ,  
Աղբյուրը գընաց ու ետ չըգառավ...  
Ամպերն եկել են սարերը պատել,  
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,  
Հագար չար ու շառ, հագար հարամի,  
Հագար ջահելներ վըխտում են հիմի...

Ու ելավ տեղից պառավը հանկարծ.  
— Ո՞ւր կորար, Անուշ, այ մաղրդ կըտրած ...  
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,  
Կանչում է, կանչում անաս գավակին.  
— Աղջի, սեասիրտ, քու անը կըտրի,  
Աղջիկը մենակ ձորը կըմըտնի.  
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,  
Ի՞նչ ես կորցրել՝ չես կարում գըտնել...  
Աղջի, հեյ Անուշ, այ աղջի, Անուշ...  
Ծընկանը գարկում, հառաչում է «վուշ»...  
Ու ձորի գըլխին մոլորված կանգնած  
Նայում է ներքե սիրտը սեակնած:  
Ամպերն եկել են սարերը պատել,  
Ձորերը լըցվել, իրար փաթաթվել,  
Հագար չար ու շառ, հագար հարամի,  
Հագար ջահելներ վըխտում են հիմի:

# VIII

— Թո՛ղ, կանչում ե՛ն ինձ... մերքոս կիմանա...  
 — Ձե՛, Անճուշ, քիչ էլ, մի քիչ էլ մընա...  
 — Ձե՛, Թո՛ղ, ես գնամ... ախ, ի՛նչ խենթ եմ ես...  
 Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,  
 չենց ես եմ մենակ լալիս ու տանջվում,  
 Դու սարի լանջին խաղեր ես կանչում...  
 Վաղճւց, վաղուց ես դու ինձ մտապել...  
 Ես երբ եմ եկել էստեղ քարացել  
 Ու մընում եմ քեզ, մընում, անիրանվ,  
 Էնքան մընացի՜ աչքըս ջուր դառավ.

Ինձ չես լըսում,  
 Ձես արհեստում,  
 Էլ չես ասում—  
 Ինչ կըլնեմ ես...  
 Ես կը վառվեմ,  
 Հուր կը դառնամ,  
 Ես կը հարվեմ—  
 Ջուր կը դառնամ,  
 Ես... չը գիտեմ  
 Ինչ կը դառնամ,  
 Թե որ մին էլ  
 Էսպես մընամ...

Ասում են՝ ուռին  
 Աղջիկ էր ինձ պես,  
 Մընում էր յարին,  
 Ու չեկավ նա տես:  
 Խեղճը գողալով՝  
 Անհույս կըռացավ,  
 Դարդից հորացավ,  
 Ուռենի դարձավ...  
 Ջրերի վըրա  
 Գըլուխը կախած  
 Դեռ դողում է նա



Ու լալիս կամաց,  
Ու ամբողջ տարին  
Մի միտք է անում,  
Թե յարը յարին  
Ո՞նց է մոռանում...

— «Ախ, Անճուշ, Անճուշ, էդ ի՞նչ ես ասում.

Բա դու չե՞ս լքում.

Էն, որ լանջերին խաղեր եմ ասում,

Ո՞ւմ հետ եմ խոսում...

Էն, որ գիշերով շրճու եմ փրչում,

Էն մամ եմ կանչում...

Էն, որ մոլորված նրստած եմ մընում,

Ո՞ւմ հետ եմ լինում...

Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,

Էն մամ եմ հիշում...

Ախ, Անճուշ, Անճուշ, անաստված Անճուշ...»

Արբեցած, անձձ

Հառաչեց հովիտին ու սրբափն ընկավ,

Հարկեցավ, հանգավ...

## IX

— Անճուշ, այ աղջիկ, Անճուշ, տուն արի...

Կանչում է մերը, հառաչում, կանչում:

— Գալիս եմ, գալիս, գալիս եմ, հանի՛ր...

Ձորից աղջրկա ձենն է դողանջում:

Ու մայերն անկարգ տրված թիկունքով

Ու ցրված շիկնած ալտերի վրան,

Դուրս եկավ թեթեւ մայերի տակից

Անուշը՝ փախած եղնիկի նման:

Նա կուժը դատարկ ետ բերավ կըրկին,

Իսկ ուսին տարած ուսաշոր չրկա,

Թողել է էն էլ ջրի եղերքին...

Ախ, անհոգություն ջահել աղջրկա...

— Նանի, վախեցի, գանգատում է նա,  
Եվ ուղում է լալ, չի կարողանում.  
Նանի, ներքում ես մարդիկ տեսա,  
Կարծեցի՝ թուրքեր էին լողանում...  
Անիծում է ծեր մերը բարկացած  
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,  
Ու անեծք ապրով իջնում է նա ցած՝  
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:





ԵՐԿՐՈՐԴ ԵՐԴ

(Համբարձման առաջօրը)

X

Համբարձումն եկավ, ծաղկունքը արվան  
 Զուգել են հանգեր նախշուն գորգերով.  
 Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան  
 Վիճակ հանելու աշխույժ երգերով.

Համբարձում, յայլա,  
 Յայլա ջան, յայլա,  
 Սև սարեր, յայլա,  
 Յայլա ջան, յայլա:

Երգ ու բույր խառնած,  
 Թե-թեի բլրնած  
 Զուգում են լեռներ,  
 Ծաղիկ են քաղում,  
 Ծաղկի հետ խաղում  
 Խնչակս թիթեռներ:



Համբարձում, յայլա,  
Յայլա ջան, յայլա,  
Լավ օրեր, յայլա,  
Յայլա ջան, յայլա:

Եկավ Համբարձում  
Ծաղկով պարզարված,  
Մեր բախտին հարցում.

— Ո՞վ է մեզ գրքված:

- Այ ջան աղա, հորան աղա, ճամն ես գու:  
— Աստված գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես գու:

Դե հանիր, անջի,  
Վիճակն ի բարին,  
Երգերով գովենք  
Էն իգիթ յարին:

- Բեղը ծիլ-ծիլ, բոյը թիլ-թիլ էն յարի,  
Ի՞նչ դարդ ունեմ քանի նա կա աշխարհի:

Համբարձում, յայլա,  
Յայլա ջան, յայլա,  
Հուր սրբաեր, յայլա,  
Յայլա ջան, յայլա:

Թընդում են երգեր, խընդում են սրբաեր,  
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.  
Շինում է մեկին իր երազն ու սեր,  
Մյուսի մուրադը սրբաումն է մընում:

Պըտույտ է տալիս վիճակը նորից  
Քուշուշքը գլխին ծաղիկ Ծաղկամեր,  
Թընդում «ջան գյուլում» մատաղ սրբաերից,  
Հետը գըլգըլում էն ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,  
Ա՛յ սարի սովոր աղջիկ,  
Ջիգյարին գյուլա գիպչի  
Քեզ սիրի սվ որ, աղջիկ»:

— Ո՛հ, ի՛նչ սե վիճակ քեզ բաժին ընկավ,  
Սեւաթիս քուրիկ, նաղելի Անուշ,  
Քու ձեռը կոտրի, սվ որ հանեցիր...  
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ:

— Սուտ բան է, քուրիկ, դու մի հավատար,  
Լոկ պատահական մի չար խոսք է սա.  
Սիրադդ մի կոտրի սուտ բանի համար,  
Քու խաղը խաղան, ջան գյուլում ասա:

— Ա՛խ, չէ՛, ես չխեղեմ, որ ես բախտ չունեմ.  
Ես երբեք, երբեք բախտ չեմ ունեցել...  
Ես միշտ էլ էսպես անբախտ կըլինեմ.  
Մանուկ օրից են դեռ ինձ անխեղ...  
Ասում են՝ մի օր, ես օրորացում,  
Մի պատալ դարվիշ մեր դուռն է գալի,  
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,  
Իմ նանը նըրան բաժին չի տալի:

— «Կորի, ասում է, կորի մեր գրոնից,  
 Երեխաս ճաքեց, հեռացիր, գրնա...»  
 Ու դարվիշն էնտեղ անիծում է ինձ,  
 Թե՛ դըրա օրը լացով անց կենա...  
 Ախ, էն դարվիշի անեծքին անդուժ  
 Ու էս վիճակին տեղյակ է աստված.  
 Սիրտըս էլ միշտ փակ, սիրտըս էլ միշտ մոռնի,  
 Ինչ կա, չըզիտեմ, իմ առջև պահված...

— Մի արբամիր, Անուշ, մի լինիր համառ.  
 Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,  
 Մի խելառ դարվիշ, մի անեծք հիմար,  
 Ու լալիս ես դու էդպես սրտաճաճ...  
 Հանգիստ կաց, քուբիկ, մի վախիր էդքան,  
 Կյանքը քեզ համար վառ դարուն է դեռ,  
 Էդ քո նորահաս մատաղ կուսուժյան  
 Առաջն դեռ կան երջանիկ օրեր:  
 Սուտ բան է, քուբիկ, դու մի հավատար,  
 Լոկ պատահական մի չար խոսք է սա.  
 Սիրարդ մի կոտորի սուտ բանի համար,  
 Քու խաղըդ խաղան, ջան դյուլում ասան:

(Խումբը նրզում է)

Աղջի, բախտավոր,  
 Երնեկ քու սերին,  
 Քու սարի սովոր  
 Սե-սե աչքերին:

Համբարձում, յոյլա,  
 Յոյլա ջան, յոյլա,  
 Սեր-օրեր, յոյլա,  
 Յոյլա ջան, յոյլա:

Մեռնեմ դարունքիդ,  
 Ծաղկած դարուն ես,  
 Սարի պես մեջքիդ  
 Կանգնած յար ունեւ:

Համբարձում, յայլա,  
Յայլա ջան, յայլա,  
Սար-յարեր, յայլա,  
Յայլա ջան, յայլա:

(Անուշը մենակ)

Ախ, իմ բախտը կանչում է ինձ՝  
Ձե՛մ հասկանում գեպի ուր...  
Դողում է սլաղ նըրա ձենից  
Իմ սիրտը սև ու տըխուր:

Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,  
Թաքուն մի ցավ ունիք լուռ,  
Աչիկներըդ լիքն է արցունք,  
Սիրտներըդ սև ու տըխուր:

Ախ, ծաղիկներն էս աշխարհում  
Տանջվում են միշտ էսպես դուր,  
Տըրտրվում են ու թառամում  
Սիրտները սև ու տըխուր:

(Խումբը հեռից)

Համբարձում, յայլա,  
Յայլա ջան, յայլա,  
Վառ ցավեր, յայլա,  
Յայլա ջան, յայլա:





ԵՐԻՈՐԳԻ ԵՐԳԻ

## XII

Զըմբան մի գիշեր կար մի հարսանիք,  
 Հըրճվում էր անգուսպ ամբողջը գյուղի.  
 Գյուղն էին իջել հովիվ պատանիք  
 Աղջիկ տեսներու, պարի ու կոխի:  
 Ու պարից հետո լեն հըրապարակ  
 Բաց արին մեջտեղն արձակ գըլխատան,  
 Զուռնաչին փըշեց կոխի եղանակ,  
 Ահեկ ու ջահեկ իրարով անցան:  
 Հարաջ են տալի— «Քաշի հա, քաշի...»:  
 Ու դուրս քաշեցին զոռով երկուսին.  
 Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի  
 Անգրանիկ եզրայր, դառնաբաժ Մոսին:  
 Ողջ գյուղը կանգնեց պարըսպի նման,  
 Զոկվեց, բաժանվեց երկու բանակի,  
 Ամեն մի բանակն ընտրեց փահլեան,  
 Կանգնեց թիկունքին տըղերանց մեկի:

Գոռում են, գոչում երկու բանակից.  
 — Սըրտապինդ կացեք, մի վախեք, արդե՞րք,  
 Իսկ նորեկ հարսի փարչի քամակից  
 Նայում են կանգնած հարս ու աղջիկները:  
 Ու տաքանում են արդերքը սաստիկ,  
 Փեշերը հավաք խրրում են գոտին,  
 Գետին են զարկում ձեռքերը հասալիկ,  
 Իրար են հասնում թափով մոլեղին...  
 Աղաթ կա սակայն էն մութ ձորերում,  
 Ու միշտ հընազանդ հընոց աղաթին՝  
 Ամբոխի առջև իգիթն իր օբում  
 Գետին չի զարկիլ ընկեր իգիթին:  
 Ու իրար բըռնած Սարոն ու Մոսին  
 Քաշում են, ընկնում խոզապարկուկի,  
 Ընկնում են գետին, ելնում միասին,  
 Դըժվար է իբրև հաղթել մեկ մեկի:  
 Իզուր է գոռում ամբոխը հարբած,  
 Ձուր սըրտատըրով նայում աղջիկներ,  
 Եվ զուր է Անուշն իր շունչը կըտրած,  
 Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր:  
 Անուշը կանգնած... Սարոն նըկատեց,  
 Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ.  
 Աչքերի առջև մըլարը պատեց,  
 Մոռացավ ընկեր, աղաթ ու աշխարհ:  
 Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,  
 Կառակի առյուծ թողած էր իրեն,  
 Ուժ արավ Սարոն, ծընկեց կատաղի,  
 Գետնեց ընկերին ու չոքեց վրեն:  
 Ամբոխը թափվեց հարա-հըրոցով,  
 Վեր թըոցրեց ջահել փահլաններին,  
 Եվ ուրախության աղմուկ-գոռոցով  
 Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:

Յընձության ձայնից, ծափերի զարկից  
Շարժվում են, դողում պատեր ու օճորք,  
Իսկ նորեկ հարսի փարզի քամակից  
Նայում են կանգնած հարսն ու աղջիկերք։

### XIII

Վեր կացավ Մոսին. իրեն կըտրատում,  
— Թող գն, գոռում է, որ բըռնենք նորից,  
Թե չէ նամարգը, արևս եմ երգվում,  
Էլ չի պրծնելու երբեք իմ ձեռից։  
Վեր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...  
Մեյդան բաց արեք, թող մին էլ մեջ գա...  
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,  
Թաւնալի ծաղրով կանչում են, գոռում.

— Չելավ, էդ չելավ,  
Վեր չի գըցել դեռ,  
Մոսին թոյ էլավ —  
Խոզապարկուկ էր...  
Հն, հն, հն, տըղերք,  
Շատ էլ լավ կանի.  
Մեջքը թնփ տըվեք,  
Թող մին էլ բըռնի...  
Հն, հն, հն, տըղերք,  
Մեջքը թնփ տըվեք...

# XIV

Եվ աղմբեկալի հարսանքի տանից  
 Դուքս եկավ Մոսկն սաստիկ վերավոր.  
 Արյուն է կաթում սեականած սրտից,  
 Գրնում է ըշտապ, քայլերը մոլոր:  
 — Ամսթ քեզ, Մոսկ, թո՛ւք ու նախատինք,  
 Ամսթ քեզ նըման դոված իգիթին,  
 Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,  
 Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:  
 Ի՞նչպես վեր ընկար դձւ — սարի նըման,  
 Երբ որ նայում էր ողջ գյուղը կանգնած...  
 Դձւ... Կուչ գաս տակին Սարոյի ծընկան,  
 Նըբանից հետո երևաս կանաճնց...  
 Եկած էր էս բանն իսկի քու գըլխին...  
 Ծաղրատեղ զառար բովանդակ գեղին...  
 Դե մեռիր, էլի, գետինը մըտիր,  
 Տանը վեր ընկիր՝ իլիկ պըտրալիր...»







## XV

— Վա՛յ, վա՛յ, Մոսի ջան, ինձ մի քսպանիր,  
Սըրանից հետո չեմ սիրիլ նըրան...  
Վախենում եմ ես... դամեղ տեղը դիր...  
Սիրաբոս գողում է տերևի նրման...  
Խընդրում էր լալով եզրոր առաջին  
Անգոր ու դալուկ իր քույրը չոքած,  
Մոսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝  
Ուզում էր մորթել նըրան՝ աչքը բաց,  
— Դե իմ անունով երգվիր, անըզգամ,  
Որ էլ Սաբոյին դու չես սիրելու,  
Թե չէ՝ տեսնում ես խանչալը հանած՝  
Մինչև դաստակը սիրադ եմ խըրելու:  
— Գու առի հոգն եմ, Մոսի ջան, Մոսի,  
Դու քու եսիրին երգում ես տալիս...  
Ես էլ Սաբոյին չեմ սիրում՝ ասի,  
Տեսնում ես չոքած լինչպես եմ լալիս...  
— Դու խաբում ես ինձ, սուտիկ, խաբեբան:  
Ձեռ սիրում ասիր, էն ի՞նչ է հապա,

Էն Բնչ է հապա, որ տեղն ենք մրանում  
 Հեկեկում ես դու գիշերովա մըթնում.  
 Էն Բնչ է հապա, որ դու երազում  
 «Սարս ջան, Սարս... Սարս» ես ասում...  
 — Մոսի ջան, Մոսի, գրվածովը շուռ գամ.  
 Ինձ մի ըսպանիր, ինձ թող էս անգամ.  
 Էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,  
 Էլ չեմ կանչիլ ես նրան երազում...  
 Ինձ մի ըսպանիր, դամեզ տար հետու...  
 Դու քույրը չեմ ես... իմ Մոսին չեմ դու...

## XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան  
 Ախպեր տղերքը էս զեպքի համար.  
 Ընկեր, բարեկամ գընացին, եկան,  
 Կըրկին հաշտության չեղավ մի հընար:  
 Անկտարում Մոսին էլ օր Մոսին էր,  
 Որ՝ աչքը զեռ բաց, էս լուս աշխարհում,  
 Իրեն հարազատ քըրոջը տեսներ  
 Նամարդ ընկերի—Սարոյի զըրկում:  
 Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝  
 Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,  
 Սարոյի անունն ու սերը թաքուն  
 Խանչալի ծերով սրտիցը հանի:  
 Ո՛վ գիտի, գուցե հենց էս գիշեր էլ  
 Իգիթ ոստիներն, անհաշտ ու համառ,  
 Մեկմեկու հոտից ոչխար են քըշել,  
 Մեկմեկից վըրեժ առնելու համար:  
 Կարող է նույնպես պատահել հանկարծ,  
 Որ մեկի զեզը—արդյունքը հընձի,  
 Գիշերով ժամին, հըրով բրտնկած,  
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:



Ս Ո Ր Ր Ո Ր Գ Ե Ր Գ

## XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նրման  
 Նոր են ջուր խրմած ձորից բարձրանում.  
 Քարոտ թիկունքից Չաթինդաղ լեռան  
 Նոր է արևը պրոտնդը հանում:  
 Գյուղում աղմուկով իրար են անցնում,  
 Կըտեր ծերերին կանայք հավաքված,  
 Տըղերքը դեպի քարափն են վազում  
 Հըրացանների կիսերից բռնած:

## XVIII

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,  
 Կանգնեց վրդովված արդերանց միջին,  
 Մասը դեպի ձոր մեկնելով հանդարտ  
 Էսպես նա պատմեց զուտ տալով չիբխին:

— Էս գիշեր, կեսը կըլնե՛ր գիշերվա,  
 Դեռ չէի կըպցընել աչքըս տեղի մեջ.  
 Քունս էլ է կորել, ջանս էլ էն վազվա,  
 Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...  
 Հո՛ւ, հալալ կեսը կըլնե՛ր գիշերվա,  
 Շունը վերկացա՛վ էս կրուան վըրա.  
 Հեյ-հեյ, կունչեցի, ձեն տըվող չելավ.  
 Շունը գազազեց, շունը վեր կալավ...  
 Հեյ գիգի, ասի ինքըս իմ միջում,  
 Ի՛նչ է մընացել առաջվան տըղից.  
 Քընում էի վաղ մենակ արխաջում,  
 Մի ձեն լըսելիս վեր թըռչում տեղից...  
 Էն էի ասում, քընել չէի գեռ.  
 Կը լինե՛ր դառը գիշերվան կեսը,  
 Երկու մարդկային սև կերպարանքներ  
 Շան առջև փախած՝ ցած իջան գեսը...  
 Էս ուր լըսեցին, գեսուգեն ցըրված  
 Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,  
 Ու մըտի տակին, ճամփիցը ծըռված,  
 Երկու մարդու թարմ սոնատեղ զըտան:

## XIX

Ամբողջ մի ամիս խումբը գինավառ  
 Սարեր ու ձորեր ոտնատակ տըվեց  
 Զորան Սարոյին գըտնելու համար,  
 Որ սարիցն իջավ, Անուշին փախցընեց:  
 Մի ամսից հետո արդերքն եկան տուն,  
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.



— Հալալ է արդին, այ իգիթություն,  
 Ահա թե ինչպե՞ս կը փախցնեն աղջիկ,  
 Մենակ Անուշի արագերը—Մոսին  
 Մընաց հանդերում. երդում կերավ նա,  
 Ուր որ էլ լինին՝ նրբանց միասին  
 Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանա:  
 Մնաց հանդերում: Եվ ահա մի օր,  
 Քաղվոր կանանց մեջ, մըթան հետ, թաքուն,  
 Շորերը պատռած, ախուր, զըլխակոր  
 Անուշը ձորից եկավ հորանց տուն:

## XX

— Աղջիկ, Վարդիշաղ, թե հոգիդ սիրես,  
 Մի դարիդ գըցիր, տես ի՞նչ է ասում.  
 Աչքըս խավարի, տեսիլք դառնամ ես,—  
 Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:  
 Մի մութ ձորի մեջ, մի նեղ ձորի մեջ,  
 Անբախտ Սարոյի ոչխարը կանգնած,  
 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,  
 Ու խաղ էր կանչում ձեն ձենի տըված...  
 Մի դարիդ գըցիր, թե որդով խընդաս,  
 Էս երազն իսկի ես լավ չեմ փորձել.  
 Ողորմած աստված, քու դուռը բանաս,  
 Քու ոտի հոգն ենք—դու ես ըստեղծել...  
 Անբան դառները մութ ձորի միջին  
 Խաղ էին կանչում ու ձենով լալիս,  
 Սարոյի նանն էլ նրբանց առաջին  
 Աղլուխ էր առել ու պար էր գալիս...

— Ազջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,  
Գարիս էլ, ահա, էդպես դուրս եկավ.  
Էս չարն, էս բարին... Սարսն է էս էլ...  
Տես, ահա, Սարսն սև ճամփեն ընկավ...  
Աստված խընայի ջահել-ջիվանին,  
Աստված խընայի իր անբախտ նանին...

## XXI

Ու ման է գալի սարերը ընկած  
Սարսն փախցրած եզջերվի նրման,  
Օրհասն առաջին, գընդակն ետեից,  
Հանդերը՝ գըժսիք, ընկերը՝ գուշման:

Եվ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ  
Սարերից իջնում, խավարն է պատում,  
Նըբա բայաթին ողբում է տրխուր,  
Ընկեր սարերին խոսում, գանգատում:

«Բարձր սարեր, ա՛յ, սարեր,  
Ձեն եմ տալի «վսյ», սարեր,  
Դուք էլ ինձ հետ ձեն արվեք,  
Իմ գարդերի թայ սարեր:

Որս եմ՝ բուխեա ձեզ արած,  
Ձեր ձորերին, ձեզ արած,  
Կուգեմ կորչեմ անգյուման,  
Էս աշխարհից ընկալած:

Կորչեմ բեղար դատարկուն,  
Քար սարե-սար դադարդյուն,  
Մեռնեմ պըրճնեմ էս օրից,  
Բալբի առնեմ դադար-քուն:

Ախ, կը մեռնեմ՝ ամա նա  
Վսյ թե հանկարձ իմանա,  
Ես աղաավեմ էս ցավից,  
Աչքը լալով նա մընա:






Հ Ի Ն Պ Ե Ի Ո Ր Պ Ե Ի Պ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,  
Կանգնած են շուրջը կանաչը հարեան,  
Ու խոսք չեն դրանում ասեն անարգված,  
Տարած-ետ բերած, անբախտ աղջկան:  
Աստված խընայեց՝ կոպիտ ախպերը  
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,  
Իսկ խոժոռաղեմ ալեոր հերը  
Ըսկսավ փրփրեքած թրքել, անիծել:  
— Դուքս գընա, կորի, ա՛յ լիրբ, անըզգամ,  
Սե ու սուգ լինի թաղ ու պրսակըդ.  
Կորի, հերեաս աչքիս մյուս անգամ,  
Գետինը մրանի երկար հասակըդ:  
Տեսար, որ նըրան ատում է Մոսին,  
Չեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ,  
Դու քանի գըլուխ ունիս քո ուսին,  
Որ վեր ես կենում փախչում նըրա հետ:  
Խռնրված գյուղացիք կըտուրից իջան  
Մեզմեկու կոպիտ բարկությունը հոր,



Հայտնիքն անյնպէս գլուղի քահանան,  
 Մի պատկառելի հըսկա արևոր,  
 — Դուրս գընացեք, գմբս, գոչեց տերտերը,  
 Անուշը թողեք ուղիղն ինձ ասի,  
 Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,  
 Նըրանից հետո բանը կը պարզի:  
 Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանի,  
 Սիրեմ ես նըրան, քու կամքով փախար...  
 Եթե սիրում ես՝ էլ դարդ մի անիր,  
 Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...  
 — Ի՞նչ են հառաչում... էն սով էր, մի անս,  
 Որ դուրսը հանկարծ աղմըկեց էսպէս...  
 Ո՞վ է ըսպանել... Մոսի՞ն... սւմ... սւր...  
 — Անսւշ, հեյ Անսւշ... ջուր հասցըեք, ջմւր...

### XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենար հանկարծ,  
 Երկընքի մըթնած ամպերից իջներ,  
 Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,  
 Գլուղից սլացան մի խումբ կըտրիճներ:  
 Յավից տաքացած էլ բան չեն հարցնում,  
 Թրուշում են, ասես տհից հալածված,  
 Ու նըրանց առջև ահուկի բացվում,  
 Թըշում է ձորը արշունով լըցված:  
 Գլուղը գատարկվեց մի աղընթարթում,  
 Դարափի գըլխին կանգնած անհամբեր,  
 Լճու, սըրտատըրոփ ալանջ են դընում,  
 Նայում են ներքե... ձեն չի գալիս դեռ.  
 Դերեդն է մենակ անդընդում հուզված՝  
 Խըլածայն ողորով սողում դեպի ցած:

## XXIV

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,  
 Դեմքը ալալված, քալվածքը մոլոր.  
 Սարսափ է կաթում արնոտ աչքերից,  
 Եվ կերպարանքը փոխված է բոլոր:  
 Առանց նայելու մարդկանց երեսին,  
 Առանց խոսելու, սեակնած, դաժան,  
 Մոռեցավ սրահին, կախ տրվով սընին  
 Սև հըրացանը—սև օձի նրման:  
 Պապանձվեց նույնպես ամբոխը մեխված,  
 Ոչ ոք ծրպրտալ չի համարձակվում,  
 Մենակ մի հոգի անգուսպ կատաղած՝  
 Հարայ է կանչում, երեսը պոկում:  
 Մեռած չորանի պառավ նանն է նա՝  
 Ցավից խեղազար բառաչում, լալիս.  
 Տարտրախտ ծրնող, վազում է ահա,  
 Ձորիցն է արխուր գոռոցը գալիս:

## XXV

Սըղավոր կանայք նըրա ետևից  
 Հարայ կանչելով ձորը վազեցին,  
 Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝  
 Դիակի շուրջը կարգով շարվեցին  
 Իգիթին վայել սըրտոտուն ողբով  
 Լաց ու կոծ արին ձեն ձենի տրված,  
 Տըգերքն էլ մըթին, լուռ ու զրլխակոր,  
 Մընացին մոտիկ քարերին նըստած:  
 Ողբացին անշունչ դիակի վըրա,  
 Անտեր մընացած ոչխարի մասին,  
 Անսիրտ անեծքով հիշեցին նըրա  
 Անճար մընացած խեղճ յարի մասին:

Եվ նըրա մասին, որ ընկերները  
 Հանդը գընալիս Սարո կըկանչեն,  
 Որ սարից փախած սոված շըները  
 Կըտերը պիտի ունան, կըլանչեն:  
 Ծանըր չոմբախը, գլուխը մեխած,  
 Օճորքում գըրած պիտի մըրրոտի,  
 Երկար խանչալը, պատիցը կախած,  
 Պատենում մընա ու ժանդը պատի...  
 Որ հով սարերի սովորած նանը  
 Էլ սար չի գնալ առանց Սարոյի,  
 Սև շորեր հագած կընըստի տանը,  
 Անցած օրերը միտը կըբերի:  
 Եվ ամեն մի խոսք, մի հիշողություն  
 Կըտրատում էին սիրտը ծեր նանի,  
 Եվ ազաչում էր նա մեռած որդուն  
 Մի անգամ խոսի, աչքը բաց անի:  
 — Ընչի՞ չես խոսում, ընչի՞ չես նայում,  
 Իմ օր ու արև, կյանք ու ջան որդի,  
 Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,  
 Թըշնամի որդի, գավաճան որդի...  
 Բայց չէին բացվում աչքերը փակված,  
 Շուրթերը սառել, չորացել էին,  
 Նըրանց արանքից ասամները բաց  
 Սիպտակ շարքերով երևում էին:  
 Ու նա կատաղած՝ հանդուգն անեծքով  
 Ծառու եղավ գուշման երկընքի զիմաց,  
 Եվ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,  
 Եվ լալիս էին ձեն ձենի տըված...  
 «Կարմիր արևից ընկած, Սարո ջան,  
 Կանանչ տերևից ընկած, Սարո ջան...  
 Արևս հանգավ, Սարո ջան,  
 Գիշերս ընկավ, Սարո ջան...»:  
 Գիշերը ընկավ, թանձրացավ մութը,

Ու նըվաղեցին ձեները տըրտում,  
Հոգնեցին, հանգան... Ծերուկ Դերեղը  
Սըզում էր մենակ խափար անդընդում:

Սըզվոր գետը  
Ծեր Դերեղը,  
Սիրաը քըրքըած,  
Ջուրը փըրփըած,  
Քարոտ ափին,  
Լեռ քարափին  
Դեռ ծեծում է,  
Հեծեծում է...

XXVI

Եվ մի քանի ընկեր-տըղերք  
Ջորում, գետի եզերքին,  
Փոս փորեցին ու սըրտաբեկ՝  
Հողին տըվին հովվի դին:  
Ծառ ու ծաղիկ՝ սըվսըվալով,  
Բույր խընկեցին դյուրեկան,  
Ծեր Դե-րեղն էլ ահեղ ձենով  
Երգեց վըսեմ շարական:  
Ու տըղերքը տըխուր ու լուռ  
Վերադարձան դեպի տուն,  
Ջորում թողած մի սև բըլուր,  
Մի գերեզման անանուն:





Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Ե Ր Գ

XXVII

Գարունը եկավ, հավքերը եկան,  
Սարեր ու ձորեր ծաղիկներ հաղան.  
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,  
Գետի եզերքին շրջում է մուրը,  
Շրջում է մուրը, խրնդում ու լալիս,  
Երգեր է ասում ու ման է դալիս:

— Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս  
էդպես մենակ ու մուրը,  
Ի՞նչ ես լալիս ու ման դալիս  
էս ձորերում ամեն օր:  
Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝  
Մայիս կըլտ, մի քիչ կաց,  
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,  
Ա՛խ, նա գընաց, նա գընաց...  
Արասավելով, լալով էդպես  
ես չեմ դարձնի էլ գերիդ,  
Ինչո՞ւ իդուր հանգցրնում ես  
Ջահել կըրական աչքերիդ:

Նըրա անբախտ շիրմի վըրա  
Պազ ջուր ածա աղբյուրի,  
Դու էլ գընա նոր սեր աբա,  
Էսպես է կարգն աշխարհի:

— Ծնորհակալ եմ, անցվոր ախպեր,  
Ատոված պահի քու յարին.  
Ճամփիդ վերջում կանգնած է դեռ  
Անուշ ծիծաղն աչքերին...  
Ուրախ սըրտով դուք ձեր սերը  
Վախկեցեք անթառամ,  
Ինձ արցունք է տվել տերը,  
Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս,  
Երգում ու լալիս:  
Երգերը անկապ, երգերը աբխուր,  
Արցունքի նման հոսում են իզուր.  
Բայց լալիս է նա ու երգեր ասում,  
Ու միշտ էն անմիտ արտունջն է խոսում,  
Թե ինչպես հանկարծ աշխարհը փոխվեց,  
Ինչպես դատարկվեց կյանքում ամեն բան,  
Սարերը մնացին որը ու անչորան,  
Թե ինչպես հանկարծ նա գընաց հեռու,  
Էլ չի դառնալով, էլ չի դառնալով...

«Ե՛ս գառ, ե՛տ, իզիթ,  
Ե՛ս գառ, անխափ,  
Կարոտած յարիդ  
Աչքը ջուր դառալ:  
Ոչխարդ էն սարով  
Շուռ տուր, տուն արի,  
Փախիր գիշերով  
Ու թաքուն արի...

Այն, էն կանանց սարի լանջին  
Ո՛վ է քընած էն տըղեն,  
Վըրեն քաշած սև յափընջին,  
Կուռը հանած էն տըղեն...  
Ջան, իմ յարն է, ջանին մեռնեմ,  
Ծաղկի հասով նա հարբել,  
Սարի լանջին, հովի միջին  
Մուշ-մուշ, անուշ մըրափել:

Վեր կաց, վեր, իգիթ,  
Վեր կաց, անիրավ,  
Ոչխարըդ բեր կիթ,  
Օրը ճաշ դառավ...  
Արի, ջան, արի,  
Քու գալուն մեռնեմ,  
Թուխ չորան, արի,  
Կարոտըս առնեմ...

Տեսեք, տեսեք, դափ ու գուռնով  
Ի՞նչ հարսնիք է գուրս գալի,  
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով,  
Ձի են խաղում, չափ տալի...  
Աղջի, աղջի, մըտիկ արեք,  
Էս քիչ տեսիլք ես տեսա.  
Ո՛վ էր տեսել էսպես հարսնիք—  
Ոչ հարս ունեն, ոչ փեսա...

Բերում են հըրեն,  
Աման, մեր տան դեմ...  
Վեր գըրեք, վըրեն  
Հյուսերըս քանդեմ...  
Ես էլ եմ գալիս,  
Էդ ո՞ւր եք տանում...  
Ինձ էլ թաղեցեք  
Իր գերեզմանում...

Ախ, չէ՛, ամա՛ն, ասում են՝ դա  
Մի գիակ է լսւո, հոտած,  
Արյունը չոր գեմքի վրա,  
Աչքերն անթաթ, սկստակած:  
Նա սիրուն էր, անուշահոտ,  
Աչքերը լի ծիծաղով,  
Նա գալիս էր ցողոտ-շաղոտ,  
Հանաքներով ու խաղով...

Արի, ջան իգիթ,  
Արի, անիրաւ,  
Կարտառած յարիզ  
Աչքը ջուր գառավ:  
Էլ մի ուշացնի,  
Ես շատ եմ կացել,  
Էլ մի լացացնի,  
Ես շատ եմ լացել...

Տես, կըխըսովեմ,  
Լաց կըլեմ ես է՛լ...  
Ձեմ խոսիլ քեզ հետ...  
Ձեմ սիրիլ քեզ է՛լ... »:





## XXVIII

Անլըռե լի վըշվըշում է  
Պըղտոր ջուրը Դերեգի,  
Նըրա ափին կանաչում է  
Մենակ շերիմն իգիթի:  
Նըրա շուրջը հեզ սիրունին  
Թընդացնում է ողբ ու լաց,  
Ձեն է տալիս իր Սարոյին  
Ու պըտըտվում մոխրված:  
Ու հոսում է գիշեր-ցերեկ  
Արցունքն անբախտ աղջըկա,  
Բայց իր սիրած արդան երբեք  
Չըկա՛, չըկա՛ ու չըկա...  
Վըշվըշում է գետը — վե՛շ, վե՛շ,  
Ու հորձանք է տալիս հորդ,  
Ու կանչում է՝ «Արի՛, Անճե՛շ,  
Արի՛, տանեմ յարիդ մոտ...»:

— Անճե՛շ, ա՛յ աղջի՛կ, Անճե՛շ, տճե՛ն արի...  
Կանչում է մերը վերելից, կանչում.  
Լճու են ձորերը, լճու են ահեղի,  
Դու՛շման Դերեգն է մենակ մըռընչում:

Վուշ-վուշ, Անուշ, վուշ-վուշ, քուրիկ,  
Վուշ քու սերին, քու յարին,  
Վուշ-վուշ, Սարո, վուշ-վուշ, իգիթ,  
Վուշ քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, էն դյութիշ գիշեր,  
Կա հրրաշալի, երջանիկ վայրկյան.  
Բացվում են ոսկի երկրնքի դռներ,  
Ներքե պապանձում, լրում ամեն բան,  
Ու աստվածային անհաս խորհրդով  
Լըցվում բովանդակ նրբա սուրբ գրիով:

Էն վեհ վայրկենին չրքնաղ գիշերի՝  
Երկրնքի անհուն, հեռու խորքերից,  
Անմուրաղ մեռած սիրահարների  
Աստղերը թըռած իրար են գալիս,  
Գալիս՝ կարոտով մի հեղ համբուրվում  
Աշխարհքից հեռու, լազուր կամարում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                         |    |
|-------------------------|----|
| Նախերգանք . . . . .     | 3  |
| Առաջին երգ . . . . .    | 5  |
| Երկրորդ երգ . . . . .   | 14 |
| Երրորդ երգ . . . . .    | 19 |
| Չորրորդ երգ . . . . .   | 25 |
| Հինգերորդ երգ . . . . . | 30 |
| Վեցերորդ երգ . . . . .  | 35 |

Պատ. խմբագիր՝ Լ. Հրայան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Լարոյան  
Կոնաբուլ տրբագրիչ՝ Է. Արաբաջյան

| ՎՋ 62450,                                                                                                                                                                                             | Պատվեր № 26, | Տիրաժ 6000: |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------|-------------|
| Հանձնված է տպագրության 15/1—1952 թ.: Ստորագրված է տպագրության 6/1V 1952 թ.:<br>Թուղթ 60×92 <sup>1</sup> / <sub>2</sub> , չեղ. 1,2 մմ., հրատ. 3,0 մմ., տպագրական 2 մմ., +10 ներդիր<br>Գինը 5 ս. 10 կ., |              |             |
| Հայտույթի դրամ 1-ին տպարան, Ալավերդյան 63, Երևան, 1952 թ.                                                                                                                                             |              |             |



